Արձանագրություն N3

ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-67/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

18.07.2025թ.
ժամը 10[30]

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Դավիթ Գևորգյան
Անդամներ՝ Կարեն Անտոնյան
Քարտուղար՝ Մերի Բարեղամյան

Նիստից բացակայում էր Վարդան Գասպարյանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի պահանջները նիստը նախագահում էր Դավիթ Գևորգյանը:

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Դավիթ Գևորգյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ և «ՄԵԴԹՐԵՅԴ» ՍՊԸ մասնակիցներին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

Դավիթ Գևորգյան

2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 2 - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 3 - «Բարրի Թրեյդ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 4 - «ՄԵԴԹՐԵՅԴ» ՍՊԸ –ն:

2.2 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը:

2.3 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Դավիթ Գևորգյան**

Անդամներ՝ **Կարեն Անտոնյան**

քարտուղար՝ **Մերի Բարեղամյան**